



Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն. Ե. Ի. Բ. Ա. Ղ. Ա. Բ. Ա. Կ. Ա. Ն.

ԹԻԻ 3940

Ֆինանսերը. — Ընդհանուր բնակչաց թիւ 2,500 տուն կը հաշուուի, զոր կը կազմեն թուրք, հայ և յոյն ապուրթիւններ: 1,150 տուն թուրք, 800 հայ եւ 650 տուն յոյն են: Բալըր կրտակաց թիւն 70ի կը հասնի, (բացի մէկ քանի խաներէ որ կը ծառայեն իբր հիւրանոց): Մէկ քանի խանութներէ և

մաղադաներէ զատ՝ ոյր կը պարունակեն զանազան ապրանաց բաւական առատ տեսակներն ու մեծ մասամբ յունաց ձեռքն են, մնացածներէն մէկ քանին խառն մանրավաճառներ են եւ երեսունէն աւելի արհեստաւորներ կրպակներ, զորս կը բանեցնեն էմաճ հայերն: Արհեստք են՝ դարբնութիւն, ոսկերչութիւն, կոշիկարութիւն եւ սափորչութիւն: Ամեն շաբթու մէջ՝ ուրբաթ օրերն՝ այս քաղաքի տօնավաճառն է, զոր տեղացիք կը կոչեն պաշար: Այս տօնավաճառը կը բաղկանայ 6-7 ժամ Պանտրմայէն հեռու եւ իւր շրջակայ թուրք, յոյն և չէրքէզ գիւղերի բնակիչներէն, որոնք նոյն օրն իրենց առձեռն ունեցած իւր, պանիր, դառ, ոչխար, հաւ, սագ, հնդկահաւ, բադ, բրդեղէնք ևն ևն առնելով քաղաքը կը գիմեն ու այդ ժամուսն բաւական ոգեւորութիւն մը կը տրիք Պանտրմայի առեւտրական այն փոքրիկ հրապարակի վրայ: Քաղաքս նշանաւոր է նաեւ մեծ եւ փոքր ձկանց առատութեան կողմէն:

Եւրոպական նորածեղութիւնք եւ սեթեւեթ գրեթէ նոր են ծներ հոս: Կանոնաւոր եւ ճոխ ճաշարաններ ու գրաստաններ բոլորովին բացակայ են ասկէ, միայն մէկ քանի պարզ սրճարաններ կը ընուն տեղացիները այս մասին ունեցած ամեն պէտքերն, ու ճիշդ խօսելով՝ անոնք իրենց այս ունեցածով ալ գոհ են, համոզուած լինելով որ մօտայն կարգ անցած Բախսա մը նորութիւնք եւ սովորոյթ վարքերը կ'ապականեն:

Ընտանեկան շրջանակի մէջ հայ կինն իւր ազատ դիրքն ունի հոս ինչպէս Պոլսոյ մէջ, իսկ հարաւ, դերձակ, լուացարարն, սպասաւորն եւ տիրուհին է: Տնէն դուրս՝ եկեղեցւոյ մէջ շարքով (չարշաֆ) մը կը ծածկէ կինն իր գլուխն ու համեստութեան քօղի տակ կ'աղօթէ նա հայ կնոջ մը միմունջներով:

Քաղաքական վիճակը. — Պանտրմա քաջամազութիւն է, ընդ գերիխանութեամբ Պալքէսէրի կոնսակալութեան, վերջինէն 17-18 ժամ հեռու:

Դ.

Պանտրմայի Ազգային հաստատութեան նշանաւորագոյն է Ս. Աստուածածին անուն հոյակապ եկեղեցին՝ որոյ առաստաղ ևն դեռ կիսաքանդ կը մնան վեր յիշած հրդեհէն: Եկեղեցւոյ հիւսիսակողմի բակի մէջ կը հոսէ բաւական առատ աղբիւր մը եւ նորա հանդէպ կը բարձրանայ ազգային վարժարանի փայտաշէն երկյարի շէնքը՝ ոյր կառուցման գլխաւոր պատճառն եւ շարժառիթն եղած է Արժ. Տ. Ոսկի քահանայի անձնութիւնը: Այս վարժարանը կը յաճախեն 200 սաներ՝ որոնք զետեղուած են ծաղկոց եւ ուսումնարան անուն երկու սրահների մէջ:

Ծրագիր վարժարանի. — Ծաղկոցի կողմ. — 1. Փանթութիւն հայերէն տառերի եւ գրել. — 2. Ընթերցանութիւն և մեկնութիւն փոքրիկ հատուածների. — 3. Մէկէն տասն թիւերի վրայ թուաբանական չորս գործողութեանց բերանացի վարժութիւն: Նախակրթարանի կողմ կ'աւանդուի. — 1. Հայ, — 2. Թուաբանութիւն. — 3. Աշխարհագրութիւն. — 4. Գեղագրութիւն. — 5. Տաճկերէն. — 6. Գաղղիերէն. — 7. Երաժշտութիւն: Վարժարանի ընդհ. պաշտօնէից թիւը չորս է, որոցմէ երկուքը Ծաղկոցին կը վերաբերին, մնացած մէկը Նա-

խակրթարանի կարգապահ եւ երաժիշտ լինելուն, բնական է որ, մի միայն մէկ ուսուցչի վրայ կը ծանրանան ամենէն կարեւոր եւ թուաւոր դասերը:

Դասատուութեան փափուկ պաշտօնին հոգեբանական եւ մանկավարժական տեսակէտով քիչ շատ ծանոթութիւն ունեցողի մը համար դիւրին է հետեւցնել թէ ո՞ր ատոյթն արդիւնաւոր կրնայ լինիլ այսպիսի վարժարան մ'ուր կը պահանջուի անձնուէր եւ արժանաւոր ուսուցչէ մ'ամենագէտ լինելու հանգամանք: Այո՛, շատ մը առարկայների եւ գիտութեանց վրայ դադար կրնայ ունենալ ուսուցչի մը, բայց ո՞չ ամեն առարկան մի եւ նոյն մեթոտով եւ հաճոյքով կը սիրէ դասախօսել, քան այն առարկայն, զոր իւր դասընդական մանուկ օրերէն սիրած եւ իր հասակի հետ հետգնեմէ մասնաւոր խնամօք զարգացուցած է. անձնական փորձն անխտելի փաստերով կ'ապացուցանէ սորա ճշմարտութիւնը, եւ այս առթիւ արժան կը համարիմ յայտնել նաեւ նոյն ծանրաբեռնեալ Տնօրէն-Ուսուցիչ Պ. Թագաւոր Շիրինեանի անձանձիր աշխատութիւնը ի մասին իւր խնամոց յանձնեալ սանուց յառաջադիմութեան:

Նոյեմբեր 12ին, երբ առաջին անգամ այցեցի Պանտրմա, ամենէն աւելի մխիթարական եւ ուրախալի կը թուէր լինել տեղւոյն մէկ քանի աղնիւ երիտասարդաց միութեամբ եւ աշխատութեամբ Պ. Յ. Տէր Ոսկեան վարժուուն երիտասարդի կազմած «Ուսումնասիրաց» ընկերութիւնն որ, նըպատակ ունէր տեղւոյն ազգային վարժարանի առաջադիմութեան զարգացումը, բանալ նաեւ օրորողաց վարժարան մը որ իր բացակայութեամբ մեծ պակաս մը կը թողու հոս: Եւ արդէն այս դիտումով, երեք-չորս ամիսներէ ի վեր սկսած էր ամսական երեք հարիւր դրուշի դուստր մը իւր կողմէ թաղային սնտուկէն վարժարանի ծախուց յատկացեալ ինն հարիւր դրուշ ամսական ծախուց վրայ յաւելցնելով դպրոցի ներքին բարեկարգութեան միջամտել:

Գեկտեմբեր 17ին երբ Պալքէսէրէն կըրկին հոս հանդիպեցայ, այդ ընկերութեան մասին իմ առաջին այցելութեան տեսած ու լած բոլոր փափաքներն ու շարժումները պաղած ու գրեթէ այդ մարմինն յուսահատ վիճակի մը մէջ գտայ: Ահա՛ գէպը մը որ Յովնանու գեղմենիի նմանութեամբ թողուց ինձ այնքան տխուր տպաւորութիւն որքան ընդունակ պանդուխտ սիրտ մը այսպիսի սրտաբեկ ազդեցութեանց: Այդ հոգեվարք մարմնոյ կենդանութիւնն ազգային վիճակի բարուրը կերպարանաւորութեան հետ անձնուէր եւ բանիբուն հովուի մը ներկայութեան կը կարօտի:

Ազգային վիճակի ընդհանուր նկարագիրը գրեթէ մէկ չորրորդ դարու տխուր պատմութեան առաձգական շարք մը կը յօրինէ, ուստի մեր աղնիւ ընթերցողաց զայրոյթ եւ վիշտ չը պատճառելու համար համառօտ տեղեկութիւն մը հաղորդենք այս մասին:

Հանգուցեալ Եղեսեան Սրբազանի առաջնորդութեան օրով, երբ մեզ անձանթ պատճառներով այս նահանգի միացեալ առաջնորդութեանց գահը կը հեռացուի ասկէ, Պանտրմայի ազգային վիճակը կը սկսի վրդովիլ՝ հակառակ այն ամեն արդարացի պահանջմանց՝ որք կը վերաբերին այդ քաղաքի ազգայնոց ներքին կացութեան եւ որոց իրականացման ազգասէր եւ ձեռնհաս

առաջնորդի մը աջակցութեամբ տրամադէր եւս կը թուին լինել: Եւ սակայն, ուղղակի կամ անուղղակի նոյն խեղճ ժողովուրդ բարձի թողի մնալով տեսակ մը կողմնակցական քմահաճ հովերին ենթակայ է դարձեր: Իրենց առաջնորդարանի կոկիկ շէնքը (թափուր*), առժամեայ թաղական խորհրդոյ անձնուէր անգամը գրեթէ ձանձրացած եւ ժողովուրդը, խեղճ ժողովուրդ, վերջին աստիճան յուսահատ եւ յուսախաբ իւր աչերը Մարմարայի փրփրողէզ ավերէն ցանկալի Վոսիորի եւ աննման Ոսկեղջիւրի կողմը սեւեռած Առաջնորդի կ'սպասէ... բայց ինքն իւր հովին ընտրելու ձայն չ'ունի: Այս գրութեամբ արդեօք նորա ներքին կացութիւնն ի՞նչ վախճան պիտի գտնէ:

Ե.

Նոյեմբեր 12, առաւօտ էր. կապոյտ երկնից գեղեցիկ կամարի վրայ կը բարձրանար ռէր-սուրբ եւ արծառ (պայծառ) արեգակն, ինչպէս կ'ասեն մեր Հայաստանցի եղբարք: Մենք պատրաստուած էինք մէկնիլ դէպի Պալքէսէր: Մեր կառապան Սէլիմ գտած է թուրք եւ յոյն երկու ուրիշ ձանձորդներ, կը լծէ նա իւր մեղի ձիեր, ու կը գետեղէ զմեզ իւր պարզ կառքի մէջ, որոյ ձեւ ու տիպարն՝ Հայաստանի գեղջուկների օրորոցին է նման, եւ «օղուր օլ-սուն» ըսելով կը մտրակէ ձիերը: Պողոտան նաւահանգստի ծայրէն կը սկսի, թըբաց նորակառոյց մեծ մզկիթի առջեւէն, մէկ քանի մանրավաճառաց շուկայէն եւ Ելլաղ խանի դռնէն անցնելով երկու-երեք վայր-գետն քաղաքի արեւմտեան կողմէ թուրք թաղի եւ խառն ի խուռ կրպակների մէջէն ընթանալով մերթ հարաւ եւ մերթ հարաւային արեւելք կը դառնայ. երեք ժամէն աւելի կը տեւէ այս ուղղութիւնն որ կ'երկարի ընդարձակ դաշտադէտնի մը վըրայ: Այս ուղին է ահա որ կը տանի ի Պալքէսէր, որոյ վրայ կ'երթեւեկեն մեր նստած կառքի պէս բազմաթիւ կառքեր և հազարաւոր ուղտերի յամրաքայլ կարաւաններ որոցմով այդ երկու քաղաքաց միջեւ փոխադրելի հակերի եւ երթեւեկող ձանթորդաց փոխադրութեան գործը կը կատարուի: Մեր աջ ու ձախ կողմեր հեռուէն ու մօտէն յոյն, թուրք ու չէրքէզ գիւղեր կը տեսնուին: Ապա մեր ուղին խտտորելով փոքր ինչ յարեւելս, մեր աջ կողմէն աւելի քան երեք քառորդ ժամ բացակայութեամբ լճակ մը իւր դէմը մեզ ցոյց կը տայ զոր կ'անուանեն «Մանիաս Աջօլի» եւ որոյ շուրջ շինուած են չէրքէզաց եւ խաղախաց բնակութիւն եղող քանի մը գիւղեր: Մէկ ժամ եւս կը դառնան մեր կառքի անիւներն, ու «Ագ-սագալ» թուրք գիւղի մէջ կը մտնենք: Հոս պէտք է նստին ժամու մը չափ ասկէ անցնող ձանթորդներն, որպէս զի կառասպանք կերակրեն իրենց ձիերն ու իրենք ալ հետերին ունեցած պաշարէն թեթեւ ճաշ մ'ընեն:

Դ. Պ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

* Մեր ի Պանտրմա հանդիպած օրերը Առաջ. Տեղալի. Խանձիբցի Արժ. Տ. Մելքիսեդեկն իւր տունը կը գտնուէր:

ՅՈՒՅԱԿ ՎԱՐԴԱՊԵՏԱՅ

—***—

(Շար. նախորդ թուէն եւ վերջ)

178. Յակոբ Առոտ փառապետան, բարոյիչ
Խառնակի
179. Յակոբ Առանեան, փն. Մարտունու
180. Յակոբ Գալոյեան, անպաշտօն ի վան
181. Յակոբ Զաքեան, մը. Կառուցայ յերազմ.
182. Յակոբ Կէօնիւեան, տեղւոյն. Տիգրիկու
183. Յակոբ Մկրտիչեան, մը. Սեանայ յերազմ.
184. Յակոբ Մուրատեան, մը. Խնձկոնից
185. Յակոբ Նորատունկեան, փն. Ամարասու
186. Յակոբ Սանասարեան, մը. Երուսաղէմի
187. Յակոբ Սարգիսեան, փն. Լիւսայ
188. Յակոբ Ստեփանեան, մը. Արմաշու
189. Յակոբ Վարդապետեան, մը. Կառուցայ
190. Յակոբ Քաջունի, լորար. Ս. Կարապետի
191. Յակոբ Քարբէրեցի, մը. Արզնու
192. Յակոբ Տ. Արաւանեան, փն. Կարմիր
վ. Երեւան
193. Յակոբոս Յոբիկեան, առաջն. Ակնայ
194. Յակոբոս Շահապետեան, քրդ. Մարտունայի
195. Յարութիւն Մալաթեան, անպաշտօն ի
Մալաթիա
196. Յարութիւն Մանուկեան, փն. Խնձկոնից
197. Յարութիւն Մարջանեան, մը. Սեանայ
198. Յարութիւն Յարութիւնեան, լուսա-
րար Վարազայ
199. Յարութիւն Շահինեան, մը. Կառուցայ
200. Յարութիւն Սիւնեցի, փն. Խոթայ
201. Յարութիւն Տաթևացի, փն. Մաղկցայ
202. Յովակիմ Ղամբեան, մը. Էջմիածնի
203. Յովաննէս Ամատունի, փն. Մարտայ
204. Յովաննէս Աջապետեան, մը. Սոյ
205. Յովաննէս Ատանայի, փոխնորդ. վան.
Անթաղու
206. Յովաննէս Արարունի, քրդ. Պալատու
207. Յովաննէս Բագրատունի, մը. Ս. Կրպո.
208. Յովաննէս Բագունի, փն. Տէրիբայ
209. Յովաննէս Գիւլապետեան, մը. Սեանայ
210. Յովաննէս Գրիգորեան, անպաշտօն ի
Խուսճուգ
211. Յովաննէս Դպիրաբեանեան, մը. Էջմ.
212. Յովաննէս Թումարազի, մը. Թումարազի
213. Յովաննէս Իսէբեան, տոչ. Վերեդոնի
214. Յովաննէս Ղալապետեան, մը. Էջմիածնի
215. Յովաննէս Մաթապետունի, փն. Կառուցայ
216. Յովաննէս Մարգարեան, մը. Երազմի
117. Յովաննէս Մալեցի, մը. Աղթմի. ի Պոլիս
218. Յովաննէս Մուրատեան, վանահայր Ս.
Առաքելոց
219. Յովաննէս Յակոբեան, մը. Աղթմարայ
220. Յովաննէս Յովնանեան, մը. Կեղուց
221. Յովաննէս Նէվրուզեան, տեղապահ
Բարբերդի
222. Յովաննէս Շիրակունի, փն. Տիգրիսու
223. Յովաննէս Ունեցի, միաբան Սոյ
224. Յովաննէս Պէննօհանեան, միաբան
Մարտունու
225. Յովաննէս Սառայեան, մը. Ֆրնուզայ
226. Յովաննէս Տ. Յակոբեան, մը. Եզրդ.
227. Յովաննէս Տ. Յակոբեան, վանահայր
Մաքրեանց
228. Յովաննէս Փառապետան, փն. Արզնայ
229. Յովաննէս Փէլաթիմալեան, միաբան
Այրեւանից
230. Յովան Սուրբասեան, փն. Ղազարու
231. Յովսէփ Այվազեան, քրդ. Ղալաթիոյ
232. Յովսէփ Բալբոյուքեան, միաբան
Սանահնի
233. Յովսէփ Խարապետան, փն. Հաղարայ
234. Յովսէփ Յակոբեան, անպաշտ. ի Մուշ

235. Յովսէփ Սարահեան, քրդ. Պէյլիւքեան
236. Յովսէփ Սոլախեան, վանահայր Աբան-
չեւազորի
237. Յովսէփ Սողոմոնեան, մը. Երուսաղէմի
238. Յովսէփ Տ. Սիմոնեան, մը. Աղթմարայ
239. Յովսէփ Փեննիւեան, յաջորդ. Հին-Նիւթ.
240. Յուսիկ Գալաթեան, մը. Վարազայ
241. Յուսիկ Էմմէրեան, միաբան Արմաշու
242. Յուսիկ Մինասեան, միաբան Կառուցայ
Երուսաղէմ
243. Յուսիկ Մովսէսեան, մը. Էջմիածնի
244. Ներսէս Առանեան, բարոյիչ Բերայի
245. Ներսէս Բզնունի, փոխ. փն. Յոսեփու
246. Ներսէս Խարապետեան, փոխ-առաջ-
նորդ. Կեղուց
247. Ներսէս Մոսրաբերդի, փն. Կալաթիոյ
248. Ներսէս Պէրպետեան, մը. Սոյ ի Պոլիս
249. Ներսէս Սիւլիմանեան, փն. Շուշու
250. Ներսէս Տ. Բարթոլոմէոսեան, միա-
բան Արմաշու
251. Ներսէս Տ. Կարապետեան, մը. Երազմ.
252. Ներսէս Տ. Սարգսեան, փոխ-առաջն.
Գերջանու
253. Ներսէս Տիգրանեան, փն. Անու
254. Նիկողոսյոս Ֆրանկիւեան, մը. Երազմ.
255. Պաղտատար Բայրախտարեան, վանա-
հայր Հոռոմոսի
256. Պաղտատար Խաչատուրեան, մը. Ս. Կրպ.
257. Պաղտատար Տ. Պողոսեան, մը. Ս. Աղթմ.
258. Պետրոս Աղեբեան, մը. Լիւսայ ի Կոյի
259. Պետրոս Աղլիկեան, միաբան Սոյ
260. Պետրոս Այվազեան, փն. Մոզնու
261. Պետրոս Բագրատունի, տղա. Քարբերդի
262. Պետրոս Գիւրջեան, միաբան Սեանայ
263. Պետրոս Թիւլեան, անպաշտ. յԱճարա
264. Պետրոս Սանայեան, մը. Աղթմարի
265. Պետրոս Մուրատեան, փն. Մարտայ
266. Պետրոս Յովսէփեան, մը. Կոթայ
267. Պետրոս Ներկարարեան, առաջն. Նի-
կոպոլոյ
268. Պետրոս Շահինեան, փն. Արու
269. Պետրոս Պալիեան, մը. Երազմ. ի Քալաս
270. Պետրոս Սասունցի, վանահայր Մատեն
Առաքելոյ
271. Պետրոս Տ. Մարգարեան, փն. Ս. Աղթմ.
272. Պետրոս Տ. Յարութիւնեան, մը. Եզրդ.
273. Պողոս Խոտամեան, անպաշտ. ի Կիւրլէ
274. Պողոս Մաղմանեան, մը. Զէյթունի
275. Պողոս Մալապետեան, փն. Խորվիրայի
276. Պողոս Յարութիւնեան, մը. Երուսաղէմի
277. Պողոս Նաթանեան, անպաշտօն յար-
տառահման
278. Պողոս Տ. Մարգարեան, փն. Հաղարանի
279. Պողոս Տ. Պետրոսեան, լոր. Եզրդուդայ
280. Պողոս Տ. Պողոսեան, փն. Աւեսու
281. Պողոս Տըլեցի, մը. Աղթմար. ի վան
282. Սահակ Այվազեան, անպաշտ. ի Պոլիս
283. Սահակ Առաքելեան, փն. Պէննիւեան
284. Սահակ Բաղդասարեան, մը. Էջմիածնի
285. Սահակ Համալեան, փն. Անկիւրիոյ
286. Սահակ Շահինեան, անպաշտ. ի Պոլիս
287. Սահակ Զօրաբեան, միաբան Սոյ
288. Սահակ Տ. Գրիգորեան, փն. Մեծափայ
289. Սահակ Տ. Կարապետեան, փն. Խիզան
290. Սահակ Գրիգորեան, մը. Կառուցայ
291. Սամուէլ Կիրակոսեան, մը. Երուսաղէմի
292. Սարգիս Վարդապետեան, տեղապահ
Զարսանճազի
293. Սարգիս Տէմիրճեան, ժամօրն. Երազմ.
294. Սարգիս Տ. Խաչատուրեան, միաբան
Աղթմարայ յԵրուսաղէմ
295. Սիմէոն Լալազարեան, փն. Մեղրու
296. Սիմէոն Յովաննէսեան, փոխ. փն. Կոթա
297. Սուրբառ Պարոնեան, հովիւ Մանչեսթր

298. Սուրբառ Օհանեան, անպաշտ. ի Պոլիս
299. Ստեփան Աղապետեան, մը. Կառուցայ
300. Ստեփան Աղապետեան, միաբան Սը-
սոյ յԵրուսաղէմ
301. Ստեփան Իսէնտէրեան, փն. Ս. Հոթիս.
302. Ստեփան Կարապետեան, մը. Սեանայ
303. Ստեփան Միլիթալեան, վանահայր
Արեւադու
304. Ստեփան Շիրակունի, փն. Գանձակու
305. Ստեփան Պաղտատարեան, մը. Մա-
տեն Առաքելոյ
306. Ստեփան Տէվլիանց, մը. Վարազայ
307. Ստեփան Քօլեան, միաբան Տաթևու
308. Սրապիւն Աթաբէգեան, տես. Բնթիւն
309. Վահան Գէորգեան, մը. Սեանայ
310. Վահան Յակոբեան, բարոյիչ Ն. Թաղ
Սամաթիոյ
311. Վահան Տ. Մինասեան, բարոյիչ Գա-
րակէօմիւրիկի
312. Վահրամ Աղաբեան, տես. Յովսէփ
313. Վաղինակ Սիսակեան, բարոյիչ Նոր
գիւղին Բաղարու
314. Վարդան Յակոբեան, տղա. Կենծայ
315. Վարդան Ոսկանեան, փն. Այլաթու
316. Վարդան Վարդանեան, փն. Այրեւանից
317. Վարդան Տիտոսեան, փն. Գոմոց
318. Վրթանէս Բապուճճեան, անպաշտ. Պոլիս
319. Վրթանէս Տէվլիանց, մը. Վարազայ
320. Տաճատ Ոսկանեան, քրդ. Կէտիլիւայի
321. Տիմոթէոս Արամեան, փն. Բասենու
322. Տիմոթէոս Ռիտունցի, մը. Հոգուց
323. Տրդատ Պալեան, մը. Երուսաղէմի
20 Մարտ 1887

ՍՓՈՓԱՆՔ

Յորժամ զփառաց խօսիս դու ինձ,
Բարձր ժպտիմ ես դառնալից:
Զ'ունիմ հաւատ ես ի ձայնն այն
Ում հաւատալ կամիս սակայն:

Փառքն ընդ հոռւ ո՛հ շիջանի.
Նախանձն ի ջահ արիւնալի
Ոչ խնայէ ի պերճ կոթող
Զսեամ շիրմին գեղազարդող:

Յընդ յայեր երջանկութիւն,
Խոսէ ի բաց եւ զօրութիւն.
Սակաւ ինչ սէր լաւագոյն է
Որ անշուղտ զմեզ սիրիէ:

Աւուրցեալ ես ինձ էակը համայն,
Լոկ ըզժպտող կամիմ եւ ձայն.
Բաւ ես ինձ օգ, ստուեր ու վարդ
Եւ անտառաց մէջ ճառագայթ:

Ես որ յաւէտ ի վիշտ սուգիմ
Եւ կամ ի խինդ, ոչինչ կամիմ
Այլ լո՛կ զակնարկդ, ո՛վ իմ աստղիկ,
Այլ լո՛կ ըզլուսնդ, ո՛վ իմ ծաղիկ:

Գ' արտեւանամք քո վարդազեղ
Զոր ողորդ լոյս մ'երկնահեղ,
Ներհէ անդորր արեւելքը մ'անհուն,
Ըզսէ՛ր միայն խնդրեմ ես հոն:

Միտք իմ սափոր զերդ անյատակ
Լի ծորանաւ մի անուշակ,
Միտք որ զաշխարհ լընոյր յաւէտ,
Կամ ըզ սիրտդ լընուլ եւթ:

Երգեա՛, ի լուր կամ հոգեղմայլ .
Ժպտեա՛ ինձ, կո՛յս, չկամիմ ինչ ալ .
Խաթանու թնայն ինձ զի՛ փոյթ է
Որ ի հեռուստ անդ քրթննջէ :

Մինչ կամ ի սէր քոյին արբշիւ ,
Ընդ վայր քերթողը լուսասըփիւ
Երազներուս մէջէն անցնին
Խըզել մեր սուրբ կապեր սրտին :

Զինչ և խորհուրդ տան ինձ նոքա ,
Նախընտրեցից մինչեւ ցըմա՛ն .
Քան ըզ փողոց ձայն դարթուցիչ՝
Զերգ քոյին որ անէ ինձ նինջ :

Կամիմ զի երբ վեհ իմ անուն
Վառի՛ ճակատ երկնից անհուն ,
Մի կէսն անձիս մնացէ յերկիր
Առ ի սիրել քեզ հեշտալիր :

Թո՛ղ զի սիրեմ քեզ ի ստուերի
Տխուր կամ գէթ առանց ժպտի .
Տխրութիւնն է մի վայր միին
Ուր նըշուէ սէր և՛ս հեշտին :

Հրեշտա՛կ ամբիժ յաչկունս հրապառ,
Կո՛յս ոյր լի ես կեանք արտասուօք յար ,
Ի թեւս քո ա՛ռ զհոգի իմ,
Թո՛ղ ընդ ոտիւք քո ըզ սիրտ իմ :

Վ. Հիւկո Թարգմ. Ս.
Զմեռին

ՅՈՒՇԻԿՔ ԲԻԻԹԱՆԱԿԱՆՔ

ԱՐԿՈՏԵՐԷՆՆ ՈՒ ԳԱՆԱՌԱԲԱՐԱՌՔ

Խըշտը — Մեծկակ լայն դանակ մը , որ
Հայաստանցիք շէնքէն կ'ըսեն , որով թութի
կամ ծխախոտի տերեւները , միս եւ բան-
ջարեղէն կը քարդեն : Ըստ Ակնցոց , ցու-
պին վարի ծայրը հաստատուած եռանկիւնի
սուր երկաթը՝ խըշտը կ'ըսուի : Խըշտ կամ
խըշ՝ Հայաստանի մէջ ալ ցուպի վարի ծայր
նշանակելէ զատ , կը գործածուի նաեւ տէգի
գլուխ հաստատուած սուր երկաթներուն ,
եւ մերթ տէգիքներուն ձեռքը գտնուած
սրածայր երկաթներուն համար : Ինչի՞ կը
խըշես , այսինքն , է՛ր կը խըշես :

Տերեւ խըշմա — Թիւեհի կտորուանք :
Խարընճա քնանալ — Երբամին առաջին
քունը , կամ վիճակը : Բղշ . պոճակէ յո՛ւեր :
Նալչէ քնանալ . Լանչա քնանալ — Ե-
րբամին երկրորդ քունը , կամ վիճակը :

Պզտի ալատ քնանալ — Երբամին երրորդ
քունը , կամ վիճակը :

Մեծ ալատ քնանալ — Երբամին չորրորդ
այսինքն , վերջին քունը , կամ վիճակը :

Ժոււ — Ժամանակ , պահ : Վն . Գահ :
Ակն . անգամ : Զորս ժոււ կերակուր կերանք :
Բղշ . Ժուլմա . Ժամանակ : Ժուլմու ժամանակ
մենք ընէս էինք :

Սերկու դարնել . Զալը դարնել . Ազսը
դարնել — Մէջէ վուր հար :

Տկուիլ — Ուռենակ :

Փիրէ-աւել . Յախ-աւել — Զալը սիւ-
փիւրկէ :

Ճոււմու — Հացով , հաւկթով եւ իւղով
եփուած կերակուր մը , հացէ-հէլվա : Տգր .
ճըմելի :

Եղւղա — Եհրիկէ : Հյս . Էլլու :
Թեւ — Թեւիկնա :

Ժուլիկ մը թեւ — Մախարա մը կլապ-
տան :

Մածունին մակարդը — Մայա .
Մայան դարնել — Պանիր չինել :

Աս գիշեր այնքան պիտի քնանամ , որ
քիչէկ մը մոխիր չօգտէր — Սաստիկ քն-
նատ եմ :

Տէմէթը չէ կապուած — Հնձուած այլ չը
կապուած ցորեն : Հյս . Խաւաւ , եւ կարնե-
ցիք՝ Բարդ կ'ըսեն : Բղշ . Խաւալ կամ օրէ՛ , այ-
սինքն , որայ : Մշ . օր :

Մըծցընել — Մըծել : Բղշ . ծըծեցա՛ր :

Մըծընակ — Ազգին վերայ կախուած
փայտը :

Աղեղնակ — Կտաւը ճղած Ժամանակ՝
երկծիւզ փայտը :

Մաղպար — Բանուորին կուրծքին դպած
փայտը :

Տաստածաղ — Ոյր վրայ ՅՕի չափ մա-
սուրա կը դնեն , էլէմիս : Հյս . վիւլ , Կ-
Ժա : Բղշ . Դաստիճաղ :

Կարիչ-դարդա — Մեծ ագաւա : Բղշ .
Ըջ ագաւա :

Ըստըրիչ — Ըսթըրիթ ես :

Պեօճէկը՝ թէքքէ է կտրեր , կամ մամուկ
է կտրեր — Խօզային չը կապուլ եւ հինցա-
ծին , կ'ըսուի :

Կզկալ — Կրծկալ : Հյս . սրբանոց : Ակն .
կըծէ :

Հաւերը տեսնեն՝ չեն աներ — Կարմիր
եւ սպիտակագոյն ծաղկի մը անուն :

Զիւմպիւլ-ծաղիկ — Նուսուֆար , յա-
կինթ ծաղիկը :

Ճանբայ չափող — Մերթ երկարող եւ
մերթ ամփոփող սողուն մը :

Կէրտէնկիճ — Կըճըռ-աղածի , որոյ թարմ
եւ բողբոջուն ոստերն աղբուրով կամ քա-
ցախով կը թթուեցնեն , իսկ պողոցն միջու-
կը՝ եթէ ծամելիք ձութին հետ բաղկացուի ,
խէժի պէս կ'առածգուի՝ եւ չը փշրի :

Ճերմկացա նէ եւայ — Ընդ այգն այգուն
եղայ : Ըստ Զէյթունցեաց՝ Դաւիթա՛ն : Հյս .
Կըննախ , կըննախմայ :

Աըլորին առջի բերին եւանք — Աղա-
մամութին դարթեանք : Ակն . Խօրօղ - Խօս :
Ըստ ռուսահայոց՝ Խալախալ :

Աըլորին երկու բերան , երեք բերան ,
չորս բերան , ևն , եւանք — Առաւօտուն
կանուխ երկուսն ալ և ալ ժամանակամի-
ջոց : Ակն . առջի-խօրօղ-խօսան , երկրորդ խօ-
րօղ խօսան եւանք : (Մանթ . Աըլոր՝ եօթն
անգամ եօթը կը խօսի , եւ մէն մի պար-
բերութեան մէջ՝ մի քառորդ ժամանակա-
միջոց կը թողու , և վերջի պարբերութեան՝
ճիշդ արշալոյսը կ'աւետէ) : Հյս . ձայնեղ
աըլորին՝ կանչան — ճէպ կ'ըսուի :

Խալպուրէ-պատմա — Տեսակ մը երկայ-
նածիղ խմորեղէն , որ կաղանդի գիշերուն
համար կը պատրաստուի :

Եաղ-պուղտայի . Զմբրուանցան — Զը-
մեռը ցանուած ցորեն : Բղշ . աշնցան : Կար-
նեցիք՝ աշնացան :

Բարակ-երգ — Ունկ , սաման թօղու :
Բղշ . Դաւի :

Քուռկիկ — Յովանակ , սըփա : Հյս . Դըր-
բուլ : Բղշ . Դաւի : Ակն . Էլլու - Դաւի : Տգր .
Էլլու - Դաւի :

Կամիկ կամ Կոմիկ — Հողէ գտաթ կամ
անուշի անթթ : Վն . Կոմիկ : Բղշ . Կոմ-
կամ Կոմիկ : Հյս . Դաւի : Կոմիկ կամ Կո-
միկ - Դաւի : Ակն . Կոմիկ :

Տօտող — Կոկորդիկ : Բղշ . Կոկորդիկ կամ Կո-
կորդիկ - Դաւի : Ակն . Կոկորդիկ :

Փեղիկ — Օսլայով հրուշակ (հէլվա) :

Բարա — Իշկէմպէ : Բղշ . սալապար : Բլ .
Խալ : Տգր . Դաւի : Ակն . այլաբանօրէն՝ Բարա

կամ Բարա կը յորջորջեն պարարտ մարդը .
Բարթը եկաւ :

Կալատակ — Աւելցուք ցորեն : Վն . Կալ-
մադ : Բղշ . Կալմադ : Բլ . Կալմադ , այ-
սինքն , կալմադն՝ որ մշակաց եւ աղբատ-
անցորդաց կը բաշխեն :

Կալաճալ — Մածունով խմոր չինուած :
Բղշ . Կալաճալ :

Աղուն — Աղալիք նիւթ :

Խնոցի — Թան հարելու տակառ : Բղշ .
Յնոց : Ակն . Խնոց :

Կոճուկ — Ոտքի ցցուած սկորթ : Բղշ .
Կոճ կամ ճան : Ակն . Կոճիկ :

Պօտինճ — Զէմպէկ : Վն . Զէմ : Բղշ . Կո-
բուլ , Կոբուլ կամ Զէմ :

Քօլատ — Մէկ բերնով չափայ :

Դգիկ մը — Դգալիկ մը , բշիկ մը ու-
տելիք : Բղշ . Դգալիկ կամ Դգալիկ : Ակն . Դգ-
ալիկ : Կարնեցիք ալ Պօլսեցուցս նման՝ Դգ-
ալիկ կ'ըսեն :

Ըրգըվան . Ըրգահան . Սամութ . Խիթ
բէշէմի . Գօգարօթ — Ըրգահան , բաղկան ,
ըրէգէնէ , սամիթ : Ակն . Ըրգահան : Տգր . Ըր-
գէնէ :

Բուռ բուռ արցունք — Ոլոռն սլոռն ար-
տասուք : Վն . Ընդիւն Ընդիւն լալ , այսինքն
կականել : Բղշ . Ընդիւն Ընդիւն Կալալ : Ակն .
Ընդիւն Ընդիւն : Տգր . Ընդիւն Ընդիւն Կալալ :

Հերկի սունկ — Նատառ մանթարի :

Տէտէ-քիւլալ — Պոլսեցուած ճերմակ
սունկ մը :

Կարմիր-մէջ — Աղբերուն վերայ բուսնող
սունկը :

Կէյիկ-մանթար — Կլորակ սունկ մը՝
որ Կէյիկ-մէջ կ'ըսեն , և որ ծոպաւոր (թեւ
թեւ) կը լինի :

Ախիճէ — Սունկին պատուականագոյնը ,
որ մեծկակ կը լինի :

Քէպապ-օթու — Մաթրին : Ակն . Զա-
հն : Տգր . Զահալ : Կարնեցիք՝ Զէմպէկ կը-
սեն :

Զիգիլ — Խաթը : Ակն . Խօրօղ : Ըստ
Կարնեցոց պէնդ-կամ պնդ :

Մաղիկ չը ծռի — Օրհնեղ մը՝ որ հան-
գիստ ապրիս , կը նշանակէ : Ակն . Դաւի չը
խօրի :

Անճելիքա կամ Անճելիքա — Հրեշտա-
կային ծաղիկ , որ անոյշ եփելու տեսակ մը
բաղադրութիւն է :

Թորթիկ — Կարմիր ծաղիկ մը՝ որ ձեան
հալելուն կը ծիլ և կ'երևուի :

Ա. Յ. ԱՅՎԱԶԵԱՆ

Յ. Գ. Սարգսի տպագրական վրիպակ-
ներն ի վերջոյ պիտի ուղղուին : (Նոյն)

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Մորթն . — Կաղմութիւն . — Առողջապառ-
թիւն մորթի . — Արեւի , օդի , ջուրի լողանք . —
Լուսանիւթ . — Երեսութիւն . — Յատկութիւն-
ներն . — Անճել կամ կաղմիւր լուսանիւթ . — Մօ-
լէսքօթի մտածումն . — Լուսանիւթի վտանգ-
ներն . — Կարման :

Եթէ մորթը մանրաղ էտով դիտուի , պի-
տի տեսնուի թէ այդ պարզ երեւոյթով
ծածկոյթն ո՞րքան բաղաժաման է : Մորթին
վրայ միլիոնաւոր ծակակիւնք կան , որոց
մէջէ կ'երևնն ու կը մտնեն հաստատուն ,
հեղուկ , կաղային մարմիններ , անկողնի

Հեղանիւթք։ Այս ծակոտիկներն կը հաղորդակցին մարմնոյ ներքին մասին հետ քաղ-մանիւ մազանման թերեւոր միջոցաւ որք եթէ իրարու կցուին, երեսունէ մինչեւ քա-ռասուն քիլոմէթր երկայնութիւն պիտի ու-նենան։ Ամենէ առաջ կը գտնուի Ֆերամբը-նը որու մասնաւոր գոյնն կուտան գունա-ւոր նիւթեր կամ գունաւոր թշններ։ Վե-րամբթին տակ կայ մորթն, (derme)։ Որու մակերեւոյթն ոլորապտոյտ է եւ կը կազմ-ւի չօղտման զգայական պարփէկներէ։ Մոր-թին մէջէ կ'անցնին արիւնային կամ աւշա-յին երակներ... մորթը կը պարունակէ նաեւ մազի, յարի պատկեր եւ ճարպէղջեւ (sebacee) եւ քրտնագեղձեր (sudorupare)։

Արտաքին մարմին մը չը կրնար մարմնոյն մէջ մտնել առանց ծակերէ, քրտնագեղձե-րէ եւ ճարպագեղձերէ մտնելու։ Մորթն այսքան նուրբ գործարաններ, ջղեր, ե-րակներ պարունակելով՝ բնական է թէ ան-տային տալաւորութիւնը յուզեն զայն մաս-նաւոր կերպիւ, եւ առաջ բերին գործա-ռութեանց, գոյնի, հիւստեածի խանգա-րումներ։ Ահա՛ այս խանգարումներէ կը զոյանան մորթային անտաժէտութիւնը։

Մորթի առողջագիտութիւնն, ծակախի-ններն եւ անոնց հաղորդակից մազանման ե-րակները բարեւոք վիճակի մէջ պահելու մէջ կը կայանայ։

Տէօթթէօն Տօգկի, մի քանի ամիսներ առաջ հրատարակած «Առողջագիտութեան ճի-շ» տետրակն, ամենաօգտակար առաջնորդ կրնայ լինիլ թէ՛ տեսական եւ թէ՛ դործ-նական տեսակէտով, բժշկութիւնն այս կա-րեւոր ճիւղին մէջ անկատարելութիւններ ունի եւ քիչ ծանօթութիւն։

Պ. Տօգկի ամենակարեւոր աշխատու-թեանէն կը բաղկեն մի քանի հատուածներ։

«Մորթն, մարմնոյ այս աշխատաւոր մա-սըն, պէտք եղած ատեն կրնայ մեր մարմ-նոյն բոլոր արեան երկու երրորդն պարու-նակել... նուազեալներն եւ շնորհեալ-ներն վերականգնողականութեամբ լաւագոյն միջո-ցըն ուժով շփուին է, մարմինն պաղ ջրով սրսկելով» (ե. 18)

«Մեր մարդկային մեքենայն ջրէ, օքէ, լոյսէ եւ քիւի-է ջերմութենէ օգտուելով, աւելի լաւ կը գործէ»։

«Օղը լաւ բժիշկ մ'է»։ Արդ որքան որ կարելի է ճշտօր օք հայթայթ եղէ մեր թո-քերուն, ուղեղին, մեր մորթին համար, մեր բնակարանաց, դպրոցաց, մեր եկեղե-ցիներուն համար, պանդոկներուն եւ բան-տերուն։ Մարդն այդ երկնային սնունդէն, ճաշի օքէն, զրկելէ մեծ պատիժ չը կայ... (ե. 38)։

Առաւօտի օքն մորթի եւ թոքերու կազ-դութեան համար խիստ օգտակար է։ Պէտք է այդ օքին մէջ կենալու վարժելի, ա-գամական հազուստով։ Այս օգտութիւ-նը կատարելու է, ամառէ ոկտեմբ, նախ պատուհանները բաց նենակի մը մէջ՝ յե-տոյ տունին միւս մասերուն մէջ ջրջագա-յելով եւ վերջապէս աւելի զով ու հովուտ տեղ մը։

Այս միջոցառումներն լողանքի վարժե-լութեամբ ձմեռն իսկ կարելի է կատարել զայն։

«Արեւը, կ'ըսէ Տր. Տօգկ, ամենէ մեծ բժիշկն է, վասն զի այն միայն կրնայ բժշ-կել շատ հիւանդութիւններ։ Թերաթիւն-ներ, խուլաւորներ (սթալմ), կարկամեալ-ներ, ջլայիններ, կրծախտաւորներ (poi-rinaire), ձեր մորթն արեւին մէջ այրել

տուէր, դեղարանի դեղերէն հազարապա-տիկ լաւագոյն է այս»։

Արեւային լողանքը կը գործադրուի հե-տեւեալ կերպիւ,։

«Վերի մասը բաց կամ լաւ անպատա-նեալ տեղ մը, հիւանդներուն մասնաւոր չափերէն հագցնելով, պառկեցնելու է խը-տեակի մը կամ բրդէ վերմակի մը վրայ, կէս ժամու չափ, մինչեւ որ արտաշնչումն յայտնի լինի»։

«Արեւի լողանքին, որ միանգամայն օքայն լողանք մ'է, կը յաջորդէ անմիջապէս ջրային լողանք կամ լուսնային»։

«Արեւէն չ'զօրնուելու համար, գլուխը դոյ լինելու է»։

«Արեւագէտ (heliophile) լինիլ եւ ոչ թէ արեւդեղիտ (heliophobe), ինչպէս շատ կը վստահնը այժմ (ե. 44)»։

Մորթային անտից անաջն առնու հա-մար, պէտք է տղանք վարժեցնել մարմու-թեան, օդի, արեւի եւ ջրոյ լողանաց, մարմնամարզի։ Եւ ծնողաց աշակերտութիւնը կը հրաւիրէ Պ. Տօգկի տետրակին այս գլու-խին վրայ «Առողջական խնամք տղայոց մորթին համար։ Այս գործարանին կարճա-ցութիւն օգտակարութիւնը»։

Սոյն տետրակն հանրութեան առողջա-կան պահպանելուն մէջ կը լրացնէ, եթէ գործադրուի այս պարզ դրութիւնն ամեն-ուրեք։ Ամենուր օգտակար այս աշխատու-թիւնն երկարատեւ փորձառութեան ար-դիւնքն է եւ մորթի խնամքն առողջադի-տութեան մէջ կարեւոր մի տեղ կը զբաւէ, որոյ կը հետեւին մի քանի տեսակ ծանո-թութիւնք։

Համոզուրկցի Պրանտի տարրագէտն։ 1869 ին մտաբերեց փնտել իմաստասիրական բարը մէջի մէջ, եւ գտաւ լուսանիւթն (phos-phore)։

Այս գիւտը ծանօթ լինելով Ունթէլի, ան նաեւ մէջի մէջէ արտահանեց լուսանիւթ. բայց այս հեղուկը քիչ լուսաթթու (phos-phate) կը պարունակէր եւ հետեւաբար լու-սանիւթի դոյզն յատկութիւն։ Կահն օսկրի մէջէ գտաւ եւ անկէ յետոյ այս նիւթը ծա-նօթ եղաւ միւս բնաւորներուն։ Եւ Շէյ-լի, այս մեծ բնաւորին արտահանութեան կերպը մինչեւ այսօր կը գործադրուի։

Ոսկրները կ'այրեն, եւ անոնց միջիւրը ջը-րախառն ծծմբաթթուով (acide sulfurique) չաղուելու է։ Ոսկրի կրային լուսաթթուն (phosphate de chaux), որ եւակրային լու-սաթթու մ'է (tricalcique), այս կերպիւ կը փոխուի միակրային լուսաթթուի (mono-calcique), այսինքն լուսաթթու կրաթթուի (phosphate acide de chaux)։

Այս լուսաթթու կրաթթուն լուծանելի է։ կրամետաղի (calcium) ծծմբաթթու ա-ղին (sulfate) միջոցաւ գտելէ յետոյ, պէտք է չոգիացնել եւ ածուխի փոշիով խառնել։ Այս խառնուրդը կը շորցուի եւ արդիւ կը-րակարանի մը մէջ աստիճանաբար կը կար-մըցուի։ Լուսաթթուն կը փոխուի Ֆեր-ֆօսֆէի։ Մէթաֆօսֆատը խողովակներու մէջ կը տարրալուծի լուսանիւթի, ածխա-թթուի (oxide de carbone), թողով կրա-յին հրալուսաթթու (pyrophosphate cal-cique)։ Ընդունարանի ջրին մէջ լուսանիւթը կը խորի։ Լուսաթթու թթուի (phosphate acide) մէկ մասն ածուխի միջոցաւ տար-բալուծուելով, կը գոյանայ ածխաթթու, ջրածին եւ սակաւ ինչ լուսաթթու ջրա-ծին։

Լուսանիւթը զտելու համար քարայծի մոր-թի մէջ կը դրուի, 500 ջրի մէջ թրջելէ յե-տոյ, ուժով ճնշելու է։ Լուսանիւթը ջրին տակ կը լողով։ Զայն սառեցնելու համար, կոնածեւ ապակիէ խողովակներու մէջ ջըն-չելով, պաղ ջրի մէջ կը խոթուի։

Հալած լուսանիւթը թափանցիկ է, ան-գոյն կամ դեղին, եղունգով ցտելու չափ կակուղ։ Բաւական բարկ հոտ մ'ունի, 440ին կը հալի։ չոգին անգոյն է։ Բարեխառն օ-դին կը շոգիանայ։ մութին մէջ կը փայլի. բայց ասոր պատճառը ճշգիւ գիտցուած չէ։ Այս նիւթը կը կոչուի կարմիր լուսանիւթ կամ անձեւ (phosphore ou amorphe)։ Մէկ քիլոկրամ օսկրէ, 80է մինչեւ 90 կրամ լու-սանիւթ կ'արտադրուի։

Աղօտ կարմիր գոյնով կարծր մարմին մ'ալ կայ որ մութի մէջ չը փայլի եւ սովորա-կան լուսանիւթին նման թունաւոր չէ։ Եթէ ածխածնածնի (sulfure de carbone) մէջ նետուի, չը լուծուի։ Բայց 2600 ջերմու-թեան տաքցնելով կը հալի եւ սովորական լուսանիւթի կը փոխուի։

Լուսանիւթը 600 աստիճան օդի մէջ կը սկսի այրիլ, պայծառ լոյս եւ անջուր լու-սանիւթային թթուի չոգիներ արձակելով։

Լուսանիւթէ կամ կարմիր լուսանիւթէ կը շինուին ընդհանրապէս լուցիկները։ Դիւ-րափառ զանգուածն, որ լուծկիներուն վը-րայ կը գտնուի, կը պարունակէ լուսանիւթ կամ կարմիր լուսանիւթ։ Լուսանիւթով պատքաստուած լուցիկները կը պարունա-կեն աւաղ, եկեղեան հոդ (աշի պոյա), սո-սինձ։ Իսկ եթէ կարմիր լուսանիւթով շի-նուին, այս մարմինը դիւրափառ չը լինելուն համար, քլորաթ աղ փոթասիւմ կը դնեն որու կը յաւելուն նաեւ ծարրաքարի ծը-ծումը։

Մօլէսթօթիւր Théorie des alimentsի մէջ գրած է «Առանց լուսանիւթի, մտա-ծումը գոյութիւն չ'ունի» բանաձեւն որ չը կրնար ընդունուիլ իբր ճշգրիտ մտածում մը։ Իրաւ է թէ, լուսանիւթն ուղեղին վը-րայ օգտաւէտ ազդեցութիւն ունի, բայց մի քանի պարագայից մէջ. այնպէս որ վերի բանաձեւը չափազանցութիւն կրնայ հա-մարուիլ։

Ամուսար, ամերիկացի բանախօսն, իրա-ւունք ունէր Մօլէսթօթի հակառակելու եւ մասամբ ապացոյցով ժխտեց անոր հաստա-տածն։ Թէեւ Կիւպլէն ուղեղային մի քանի անդամալծութեան համար պատուիրած է լուսանիւթը դործածել, այլ ընդհակառակն հիւանդները վտանգի կ'ենթարկին։ Լու-սանիւթը կիրի հետ խառնելով բժշկութեան օգտակար կը լինի։ Այս առթիւ Պ. Պրէմօն գրադէտ-բժիշկն, կ'ըսէ. «Կրային լուսա-թթութիւն կիրառութիւնը կը պատուիրեմ (phosphate de chaux) կարկամալներուն, յետեւալ տղայոց, տկար յղի կանանց հա-մար, նաեւ ելլեաւորներուն»։ Վասն զի հիւսկէններու գոյութեան հարկաւոր եղած կրային լուսաթթուն կմախին մէջէ կ'առ-նուն։

Լուսանիւթի պատրաստութիւնն մեծ վտանգներ կ'ապառնար գործաւորաց Լիօ-նի գործարանատէր Քուանթէի, եւ Պեր-մինկհամի, Ալլարիկի շնորհիւ, ոյք տարին 500,000 քիլոկրամ լուսանիւթ կը շինեն, հիւանդ գործաւորաց թիւը նուազած է. սակայն խիստ գոհացուցիչ չ'է այդ թիւն։

Գործաւորները լուսանիւթը պատրաս-տած ատեն կը շնչեն անկէ, 15 ամիսիկը-րամը չափահաս մը կրնայ մեռցնել։ Լուսա-

նիւթը չնչոյ գործաւորները թէ եւ անմիջապէս չեն մեռնիր, այլ այդ թոյնին ազդեցութենէն տեւական հիւանդութեան կը դատապարտին:

Թթուներու շօշափումը ձեռներուն կը փնտռէ, լուսանիւթային շոգիներն երկու փողերուն մէջ թափանցելով՝ ամբողջ կազմութիւնը կը կը թուեալորեն եւ լուսանիւթի շօշափումը մատներն կ'այրէ:

Այդ տեւական հիւանդութիւնը կը յայտնուի տկար քաղաւածքէ, բաղուկներու մէջ զգացուած դողէ, ողնայարի տկարութենէ, յաճախ կ'անդամալուծեն գործաւորները քառասուն տարեկանէ վեր:

Այս վտանգներն այժմ բաւական նշուալի են, մի քանի դեղորայքներէ շնորհիւ:

Գործաւորը, մանաւանդ գործաւորուհին, (վասն զի փայտերը տաշողներն այրեն են, իսկ լուցկի շինողները կիններն) որ մի քանի տարիներէ ի վեր կ'աշխատի լուցկի գործարանի մը մէջ, օր մը ակռայն կը ցաւի կամ կ'երեւայ: Այդ ակռայն քաշել կուտայ, առանց կարեւորութիւն տալու, երկու երեք ամիսէ վերջ, լինդերը կ'ուռնին եւ ուրիշ ակռայ մ'ալ կ'սկսի ցաւիլ:

Երկու ծամելոսկրներէն միոյն վրայ կ'սկըսին պալարներ երեւիլ եւ ոսկրի թաղանթը կը մերկացնեն: Թարախ կը վազէ. եւ վերջապէս հարկ կ'ըլլայ ոսկրին նեխացած մասն հանել եւ ուրիշ մը դնել:

Այս վտանգներուն առաջն առնուլ համար դէժ վեց ամիսը մի անգամ քննել տալու է, նոյնպէս գործարանին մէջ չը ճաշելու է:

Անգլիոյ Լըթֆօլի գործարանին մէջ բեւեկնի իսկութիւն պարունակող փոքրիկ տուիւրը կը գտնուեն, որպէս զի այս հեղուկին շոգիները լուսանիւթի շոգիացման ազդեցութիւնը չեզոքացնեն:

Մ. ԿՈՍՏԱՆԴԻՆՍ

ՔԱՂՈՒԱԾ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԼՐՈՅ

Փետրուար 6էն 12

ԱՐՏԱՔԻՆ

Փետր. 2/14ին Պիզմարը Իշխան, հացկերոյթ մը տալով քառասուն երեսփոխաններու, յուսալից ոճով խօսեցաւ արդի կացութեան վրայ: Իշխան-Նախարարապետը չի կարծեր թէ Ռուսիա պատերազմ հրատարակէ. այլ, ամեն պարագայի մէջ, Գերմանիա չիմա պատրաստ է ամեն պատահականութեանց: Խաղաղաւէտ նշան մ'է որ Պերլինի կառավարիչ Վէրտէր զօրավար, որ ի Բեռլինի գերման կայսեր զինուորական կցորդէն էր ժամանակ մը, այս օրերս մէկ ամսուան համար Բեռլինապուրկ գնաց, հրաւիրմամբ Ջարին, որուն սիրելի է:

— Տնտեսքով-Քորսաքով Իշխան կուրքօ զօրավարին պիտի յաջորդէ եղբր իբրեւ Բոլշիոյ կուսակալ, եւ կուրքօ զօրավար պիտի անուանի եղբր հրամանատար Վարչաւիոյ, Վիլնայի եւ Քիէվի զօրաբաժիններուն:

— Ֆրանսայի Երեսփ. Ժողովը մերժեց Արմատականաց մէկ առաջարկն, յայտարարող թէ ո՛չ մէկ նախարար պիտի կրնայ Երեսփոխան կամ Մերակոյտի անգամ ընտրուիլ բայց եթէ նախարարութենէ ելնելէն վեց ամիս յետոյ: Այս առաջարկ ուղղեալ էր ընդդէմ արտաքին գործոց նախարար Պ. Ֆլուրէնսի, որ կ'աշխատի Երեսփոխան ընտրուիլ Հօգդ-Ալպի գաւառին մէջ:

— Վիէնայի Գերման դեսպան Ռէյսս Իշխան եւ կոմս Քայնթի պարզ իօսակցութիւն մը ունեցան պուլկարական խնդրոյն վրայ: Աւստրեան կառավարութիւնը չպիտի ընդունի Ֆէրտինան Իշխանի անկման յայտարարութիւն մը բայց եթէ նորայաջորդին վրայ Տէրութեանց միջեւ միաձայն հաւանութեան մը գոյանալէն յետոյ: Գալով թէ ինչ միջոցներ պէտք է գործադրել ի հարկին ճնշում ի գործ դնելու համար Պուլկարիոյ վրայ, կ'երեւի թէ եւրոպեան միաբան գործողութեան սկզբունքէն չպիտի շեղուի, եւ ամեն պարագայի մէջ, չը պիտի ընդունուի որ Ռուսիա միայնակ միջամտէ ի Պուլկարիա:

— Լորտ Սալզպերիի թերթը, Կոմպարտ, կը հաստատէ թէ Անգլիոյ համակրանքն անխափան կը վայելեն երիտասարդ պետութիւններն որք քաջութիւն կը կուռնին իրենց ինքնակառավարութեան համար: Պերլինի Գաշնագիրը չ'արդարացներ այն իրարուքները զորս Պիզմարը Իշխան կուտայ Ռուսիոյ ի վերայ Պուլկարիոյ: Համաձայնութեան մը համար եթէ նոր բանակցութիւնը սկսին Տէրութեանց միջեւ, Պերլինի Գաշնագիրը Պուլկարիոյ բարեկամներուն պիտի տայ դիւանագիտական առատ գէնքեր՝ պուլկարական ազատութիւնները Ռուսիոյ չը զոհելու համար:

— Մոնթէլ Փոթր իւր փետր. 18 թուով հերքում կուտայ անգլի. ֆրանսական Նիդա-կակցութեան մը մօտալուտ կնքման զրոյցին: Արդէն այս տեսակ լուր մը ինքնին կարի անհաւանական է, որպէս անցեալ օր կը բացատրէինք յօդուածով մը:

— Լոնտոնէ եւ Բեռլինապուրկէ հեռագրուած նորագոյն տեղեկութիւնը շատ հաւանական կը ցուցնեն պուլկարական խնդրոյն վրայ բանակցութեանց վերսկսումն ի մէջ Մեծ Տէրութեանց: Ռուսիոյ մայրաքաղաքէն կը հեռագրուի մինչեւ իսկ, փետր. 17 թուով, թէ ուստ կառավարութիւնը պուլկարական խնդրոյն վրայ բանակցութեանց սկսած է:

— Անգլիոյ եւ Վենետուիայի յարաբերութիւնը ընդհատեցան, որովհետեւ այս ամերիկեան պետութիւն չէր ուզեր վճարել 6,000 անգլ. ոսկւոյ փոխարինութիւն մը ոսկեհանքի մը համար:

— Գերմանիոյ Գահաժառանգին հիւանդութեան ծանրանալուն տաթիւ, գերման լրագիրը ոմանք լուր հրատարակած էին թէ խնդիր է Բրուսիոյ Խորհրդարանին ներկայացնել օրէնք մը Խնամակալութիւն հաստատող՝ եթէ Գահաժառանգը մեռնի: Ուրիշ Գերման լրագրեր կը հերքեն զայս:

— Պիզմարը Իշխան, թէեւ եօթանասուն տարին անցուցած է, այնպէս փութաջանօրէն կը գործէ իբր թէ քսան ձեռներ պակաս ունենար իւր ետեւ: Կէս գիշերն երկու ժամ անցած անկողին կը մտնէ, եւ ո՛չ առաջ: Կէս գիշերէն քիչ առաջ մեծաւ անորոշակով կ'ընթերցէ: Կէս օրէն առաջ չ'եններ, զի շատ կը քնանայ:

Շատ անգամ գիշերը կ'արթնցնեն զինք, կարեւոր հեռագրեր ցոյց տալու համար: Պիզմարը Իշխան հետզհետէ կը հարստանայ: Իւր վարած պաշտօններէն ստացած թոշակները մեծ չեն, բայց իւր կալուածներէն եւ իւր ջաղացքներէն ու զտարաններէն շահած դրամներուն շնորհիւ, տարեկան հասոյթը քսան հազարէն մինչեւ երեսուն հազար անգլ. ոսկւոյ կը հասնի: Արդ, Պիզմարը Իշխան ամեն տեսակէտով գործը զիտցող մարդ է: Շուայլ չէ բնաւ, եւ իւր տարեկան կ'ընթերցէ հասոյթին մէկ մեծ մասն ապահովապէս մէկ կողմ կը դնէ:

ՆԵՐՔԻՆ

Կայս. կառավարութեան եւ Պառնտը Զիրչի միջեւ եղած հաշուական խնդրոյն կարգադրութեանը համար Բ. Դրան կողմէ իրաւարար դատաւոր կարգուած են Վսեմ. Հասան Ֆէհմի փաշա եւ Դատական նախարարութեան խորհրդական Վսեմ. Վահան Էֆէնտի:

Պառնտը գրաւորապէս յայտնած է առ Մեծ-Նապրեոն թէ ետ կ'առնու իւր բոլոր առաջարկութիւններն եւ կ'ընդունի խնդիրն իրաւարարաց յանձնել:

— Եւրոպեան նախարարութիւնն՝ Օսմ. կայս. Պանքային, Հանրային Պարտուց վարչութեան եւ Բէթիի ընդերքութեան հետ պայմանագիր մը կնքած է որուն նպատակն է հին վեցնոցները վերցնել հրապարակէն: Այս պայմանագրի համաձայն, 500,000 ոսկւոյ արժողութեամբ մէծիւրից՝ արծաթ մանր դրամի պիտի վերածուի (քառորդ մէծիւրի եւ երկու ու մէկ զրուշնոցի) և նոյնքան գումարի վեցնոց պիտի ժողվուի: Այս գործողութեան համար ինքելը ծախքն հաշուած է 150,000 ոսկի, որուն մէկ ութերորդէն քիչ մը աւելին պիտի վճարեն յիշեալ երեք հաստատութիւնը, իսկ մնացեալը՝ Մալիյէն, կամ աւելի ճիշդն՝ ըստ պայմանագրի հարիւրին գրեթէ 15 ուկէսը Պանքան, Բէթին եւ Հանրային Պարտուց վարչութիւնն եւ հարիւրին 86 ուկէսը Եւրոպական դանձը:

Այս գործողութեան կատարման համար հարկ եղած դրամը պիտի հայթայթուի Օսմանեան կայս. Պանքային կողմէ, որ փոխարէնը պիտի ստանայ յետոյ դաւառաց ոմանց ոչխարի տրոց հաւաքմամբ: Այդ գաւառաց անուանը նշանակուած են պայմանագրոյն մէջ:

Վերոյիշեալ տնօրինութեան նպատակն է դրամական հաւասարակշռութիւն մը հաստատել եւ արծաթ դրամի գինն անխախտ պահել: Զանազան միջոցներ ևս ձեռք առնուած են որպէս զի Թուրքիոյ հեռաւոր գաւառաց ոմանց մէջ եւս դողրի օտար դրամոց շրջաբերութիւնն եւ օսմ. դրամներ հաստատուին անոնց տեղ:

— Օսմ. Հանրային Պարտուց վարչութիւնը՝ տարիէ մ'ի վեր բազմաթիւ նիւտեր ընելէ եւ Մոնթէլիէի վարժարանի շերամագործական ճիւղի Տնօրէնութեան հետ թըղթակցութիւններ փոխանակելէ յետոյ, որոշած է շերամագործութեան յատուկ վարժարան մը հիմնել ի Պրուսա: Այդ հաստատութեան նպատակն է շերամագործական ուսումը ծաւալել ժողովրդեան մէջ եւ այդ արուեստը զարգացնել ի Թուրքիա:

Այս տնօրինութիւն գովելի է ամեն տե-

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

սակեալով, վասն զի բաց ի շերամագործութեան գործնական ուսումնն որ պիտի աւանդուի աշակերտաց, երկրին շերամագործը միջոց պիտի ունենան հրապարակի վրայ շերամի հունտ գտնել, զոր սովորաբար օտար երկիրներէ բերել կուտային:

Այս վարժարանի մէջ, շերամի հունտերու պատրաստութեան համար Բաղէօսի դրութիւնը պիտի ընդունուի:

Մօնթէլիէի շերամագործական ճիւղին տնօրէն Պ. Մանեօի յանձնարարութեան համաձայն՝ Պրուսայի մէջ հաստատելի շերամագործական վարժարանի տնօրէնութիւնը պիտի յանձնուի Քիւչիւք-Չէքմէճէի կայս. ազարակաց տնօրէն Թորգոսեան էֆէտիի, Այս անուանում վաւերացած է արդէն կայս. կառավարութեան կողմէ:

— Թախտիսթը Մալիյէի տնօրէն պիտի անուանուի: Ելմտական Դաւարարութեան ընդհանուր հաշուակալի օգնական Սապրի պէյ իրխանակ Մազհար պէյի որ Բաթանթի նորակալով ժողովոյ նախագահ կարգուած է:

— Բաթանթի վարչութիւնն առանձինն վարելու համար ընդհանուր վերատեսուչ մը պիտի կարգուի: Պաշտօնեայք եւ քարտուղարք պիտի որոշուին Բ. Դրան եւ Մալիյէի քարտուղարներէն եւ Միլիթի վարժարանի շրջանաւարտներէն:

— Վեհ. Սուլթանը տեղեկանալով որ իսլամ ժողովուրդէն ոմանք իրենց աղջիկներն օտար վարժարաններ կը զրկեն դաստիարակութեան համար, հրամայած է Բարձր. Շէյխ-Իւլ-Իսլամ էֆէնտիին որ արգելու եւ ցարդ յաճախողներն ալ հանել տայ այդ վարժարաններէն: Եւ Բարձրութիւն անմիջապէս գործադրելով կայս. այս հրամանն հարկ եղած հրամանները տուած է առ որ անկ է:

— Ինչպէս յայտնի է, երկաթ ուղւոյ արժէթովոց քանակութիւնը պակսեցնելու համար, ասկից առաջ որոշուած էր հրապարակին վրայէն արժէթովութիւնը գնել այն գումարներով որք շահաւոր պարտուց վարչութեան կազմութեանն առաջ քաշուող վիճակահանութեանց մէջ չհաջող թիւերու պիտի տրուէին իբրեւ պարգեւ եւ որք այդ թիւերն հրապարակի վրայ չը գտնուէրն պատճառաւ պահուած էին: Այսու թէ եւրոպացի արժէտեսարք կը բողբեն այս որոշման դէմ եւ կը պահանջեն որ այդ յաւելեալ գումարն յատկացուի երկաթ ուղւոյ վիճակահանութեանց պարգեւներու քանակութիւնն աւելցնելու:

— Փիլիպէն կը գրեն առ Մանթէօս թէ 8 առ 100 մաքսատուրքն որ կ'առնուի Արեւ. Բուլղարի ներմուծեալ օսմանեան ապարանքներէն, փետրուար 4/16 էն սկսեալ 100ին 5 ի իջուցուեր է: Սակայն ապրանաց արժէքը կ'որոշուի եղեր ո՛չ թէ մաքսային սակագնոց համաձայն, այլ Փիլիպէի մէջ օրուան գնոց համաձայն: Այս կերպով մաքսատուրքը զեղչուած չը նկատուիր, այլ իւր նախկին քանակութեան վերածուած եւ մինչեւ իսկ աւելցուած: Մանթէօսի թղթակիցը կը յարէ թէ պոլկար կառավարութիւնը կը խորհի միանգամայն կրկնապատկել գլխահարկի (սփրոս) տուրքը:

Վեհ. Մակար Կաթողիկոսն օրհնութեան կոնդակ մ'ուղղած է նորընտիր Քաղաքական ժողովոյ անդամոց:

— Պիլէճիկի (Պրուսա) առաջնորդարանէն Պատրիարքարան զրկուած տեղեկագիր մը աղէկէջ կերպիւ կը նկարագրէ Կէօլ Պազար գաւառակի Կէօլ Տաղ գիւղախմբի Հայոց խղճալի վիճակը սովի պատճառաւ, եւ անմիջական օգնութիւն կը խնդրէ:

Զուտ Հայ գիւղերն են վեց, 9000 բնակչօք, եւ կը կոչուին Ալընճա, Չալլարայ, Մուրատճա, Թիւրքմէն, Եէնի-քէօյ եւ Հիսարլը: Բնակչաց 100ին 30ն օրական պարէն ունին բիշ շատ, իսկ մնացեալք բոլորովին զուրկ են ամեն ապրուստէ: Միւս թուրք գիւղերու վիճակն աւելի սոսկալի է: Սովի պատճառն է ճամբայներու հաղորդակցութեանց ընդհատումը ձմրան պատճառաւ: Հայ ժողովուրդը պաղատագին օգնութիւն կը հայցէ Պատրիարքարանէն եւ Սովեց Յանձնաժողովէն, խոստանալով փոխարէնն հատուցանել լաւագոյն օրերու մէջ:

— Կը լսենք թէ Ազգային Կեդրոնական Վարչութիւնը նկատելով որ Պանտրիա եւ Պալըքէսիք չեն կարող ուրոյն առաջնորդ մը ունենալ, մտադիր է եղեր զայնս միացնել Պրուսայի առաջնորդութեան հետ:

— Երէկ հետեւեալ հեռագիրն ստացանք մեր թղթակցէն:

Ատարազար, 11 փետր.

« Սաքարիա գետին յորդումը սաստկանալով, Ատարազարի մեծ մասն ողողեց: Տեղական կառավարութիւնն ամեն ջանք ի գործ դրաւ: Թշուառութիւնը վերջին աստիճանի հասած է »:

— Իզմիրեանց Կտակի Յանձնաժողովն իւր տարեկան մրցանակաբաշխութեան համար ստացած է բաւական ձեռագրեր որոց մէջ կը տեսնուին գլխաւորաբար Մարկոս էֆէնտի Ալարէքեանի ընդարձակ Հայոց Պատմութիւն մը, երեք չորրորդը գրուած, Բաղդատական ուսումնասիրութիւն մը Մեսրոպեան տառերու պատմութեան վրայ, Ուսումնասիրութիւն մը Ազուլեցուց բարբառին վրայ եւն:

— Կաթողիկ Ասորոց Տիգրանակերտի առաջնորդ Տ. Խուրի Պաթրաս երկուշաբթի օրը Պատրիարքարան գալով տեսակցեցաւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր եւ Պատրիարքական Գեր. Փոխանորդ Հօր հետ: Տ. Խուրի Պաթրաս այցելեց նաեւ Մայր եկեղեցին:

— Մեզ հաղորդում են, որ Մեծ. Յովհաննէս Յովնանեանը հինգ հազար բուրլի է նուիրել Ներսիսեան Ազգային Հոգեւոր Դպրանոցին, որպէս զի այդ դրամի տոկոսով Հոգաբարձութիւնը մի օրէնգիր պահէ, անուանելով նորան « Ալամդարեանի որդեգիր »:

(Աջագիր)

— Յայտնի է թէ Պատրիարքական Գեր. Փոխանորդ Հայրն ժամանակէ մ'ի վեր կը շարունակէ իրենց հայրենիքները զրկել մայրաքաղաքն գտնուող պանդուխտ քահանայներն: Արդ երեւո նոր պանդուխտ քահանայք եւս հասած լինելով ի Կ. Պօլիս Ն. Գերապատուութիւն, առժամեայ կերպիւ Ազգային հիւանդանոց զրկեց զանոնք եւ մէկ քանի օրէն իրենց հայրենիքը պիտի վերադարձնէ:

— Ռուսի Բուրլէր կը ծանուցանէ թէ

չնորհիւ Մոսկուայի Լազարեան ձեւարանի տնօրէն Պ. Քանանեանցի, ձեւարանի սրահին մէջ յայտնուեց արաբերէնի, պարսկերէնի, թուրքերէնի, հայերէնի եւ վրացերէնի դասականութիւնք պիտի լինին փափաքողաց, Մոսկուայի զինուորական չրջանակի սպայներէն եւ վաճառականներէն շատեր փափաք յայտնած են ստորագրութեան: Իւրաքանչիւր լեզուի համար վեցամսեայ դասականութեան դիմն է 5 բուրլի:

— Սերէֆի մէջ հետեւեալ կը կարգանք:

« Հապէշիտանի Կից Շոա երկրի թագաւորն Մէնէլիք, որ ընդ իշխանութեամբ Հապէշաց թագաւորին, իւր երկիրն գնացող Միքաէլեան (°) անուն վաճառականին միջոցաւ 2600 Քրանքի արժողութեամբ ուկր զանգուածներ նուիրած է Աղեքսանդրիոյ հայոց ուսումնասիրաց ընկերութեան: Մէնէլիք թագաւորն ինքնագիր նամակ մ'եւս ուղղելով այդ ընկերութեան յանձնարար է որ ամեն ջանք տանին կրթութեան գործը:

Նոյն ընկերութիւնը չքեղ հացկերոյթ մը տուեր է ի պատիւ Պ. Միքաէլիանի:

Բ Ա Ձ Մ Ա Վ Է Պ

Ստացանք ԲԱՁՄԱՎԷՊի 1887 տարւոյ եռամսեայ չորրորդ պրակն (հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր) հետեւեալ պարունակութեամբ:

ՀԱՆԴԵՍ ՀԱՅԿԱԿԱՆ

Նորատիպ մատեան.— Երանելոյն Յովհաննու Ոսկեբերանի Մեկնութիւն Եսայեայ, Թարգմանեալ լատիներէն:

Ճանապարհորդութիւն ի Թէոդոսիոյ դէպ ի Նոր-Նախիջեան:

Քննադատութիւն Ատուրի Բառագարտների Մ. Խորենացոյ Պիտոյից գրոց վրայ:

Նշանք հայկական երաժշտութեան իտալերէն-հայերէն:

Յայտարարութիւն Յովսէփայ Իզմիրեանց կտակի յանձնաժողովոյն:

Նեմեսիոս եւ Նորա Յաղաթ Բնութեան Ժողովուրդը հայկական հին Թարգմանութիւնն.— Չեկուցումն:

Նեմեսիոսի փիլիսոփայի եմեսացոյ՝ յաղագս բնութեան մարդոյ, Կառնեանի:

Հրաժեշտ ի Սիրելոյ (Նոր-Քնար)

ՀԱՆԴԵՍ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Թագաւոր լերանց. վիպասանութիւն Եղմոնդ Ապուի:

Զմրան առաջին խարոյկն. (Մանրագիր): Քերթնած.— Որտեայ տաղ յԱզգոստոս.— Ողորմութեան Հրեշտակը.— Սոփի Փարիզու (Վոլդէս).— Զապէլ:

Առաւի.— Աղբերակն եւ Ագահ.— Մեխակ եւ ամս.— Էշ եւ Վարսակ.— Հեղեղ:

ՀԱՆԴԵՍ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

Տարերք Կենդանաբանութեան, Կապիթէն Զաւկիթները անապական պահելու կերպ:

ՀԱՆԴԵՍ ՊԱՏՄԱԿԱՆ

Սելճուգեանք եւ Օսմանեանք: Լեւոն ԺԳ եւ Գեղարուեստը:

Տաճար Ս. Պետրոսի ի Հռովմ: Թանկագին եւ ազնիւ ընծայք առ Ս. Քահանայապետն:

Պատմական տեղեկութիւնք Լեւոն ԺԳի կենաց եւ եօթնամեայ քահանայապետութեան վրայ:

Guerlain de Paris.

15, Rue de la Paix.

ՀԱՍՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԿԵ ՅԱՆՁՆԱՐԱՐՆԵՐ ՀԵՏԵԻՆԵԱՆ ՀՈՏԱԻՏ ՆԻԻԹԵՐԸ Eau de Cologne Impériale. Sapoceti, օճառ արդուզարդի համար Ambrosial cream, օճառուտ քաղցր ամրու-
նող մարդու համար. Crème de Fraises մորթի կակուզցնելու համար. Poudre de Cypris
ղովաջնելու եւ ձերմկցնելու համար մորթի. Stilboideինալ տալու համար մազերուն եւ մորու-
քին. Eau Athénienne et Eau lustrale հոտ խնկելու եւ մաքրելու համար գլուխը. Alcoolat
de Cochlearia ակուայներու համար. Eau de Chypre արդուզարդի համար. Թաշկինակի հա-
մար հոտուէտ նիւթեր՝ Héliotrape, Pao Rosa, Shore's caprice, Maréchale Duchesse, Ma-
rie Christine. Imperial Russe. 977 26—29

ԹԱԳՈՒՀԻՈՅՆ ՄԱՆԵԱԿԸ

Հեղինակ

ԱՂԷՔՍԱՆԴՐ ՏԻԻՄԱ

Անմահ Տիւմայի սոյն հաշակաւոր եւ մեծարժէք վէպն, որ մաս առ մաս կը հը-
րատարակուէր, բոլորովին աւարտած լինե-
լով, կը վաճառուի ամեն գրաւաճառաց եւ
Ջրավաճառ Պօլոս եւ Յակոբ աղաներուն եւ
Սէփեթճի խանի դէմ ծխավաճառ Գէորգ
աղայի քով, Բերա թիւնէլի դէմ Նալպատ-
եան գրատունը, Չմիւսնիա Չուխա Պէ-
տէսթէն Սարգիս էֆ. Պ. Թէտէրէճեանի
եւ Ռոտոսթոյ Ռուբէն էֆ. Գօլանճեանի
քով, Չորս հատորը որ 1220 էրես կը պա-
րունակէ 48 զրուշի կը վաճառուի:

Ի մօտոյ պիտի սկսի «ՄՕՆԹԷ ՔՐԻՍ-
ԹՈՅԻ ՈՐԴԻՆ» անուն հետաքրքրաշարժ
վէպին հրատարակութիւնը դարձեալ Յարու-
թիւն էֆէնտի Քրիստափորէանի ձեռամբ,
որ վերը յիշուած մեծաճախ գործն յաջո-
ղապէս ի գլուխ հանած է, եւ ինչպէս յուսա-
լի է, եթէ գոհացուցիչ թուով բաժա-
նորդ գտնէ, կը խոստանայ ամեն օր մէկ
մէկ թերթ տալ:

Բաժանորդ գրուիլ փափաղողը կրնան
այժմէն սոյն ջրավաճառաց դիմելով իրենց
անունը նշանակել տալ:

Ով որ տասն բաժանորդ գտնէ, մէկ
օրինակ ձրի պիտի ընդունի, եթէ ուղևակի
դիմէ հրատարակչին:

Գաւառներէն եթէ փափաքող ըլլայ,
պէտք է նամակաւ մը իւր հասցէն յուղար-
կէ Պապը-Ալի ճատտէսի թիւ 52 Շիրքէ-
թի Միւրէթթէպիէյի տպարանը Յարութիւն
Քրիստափորէան իֆէնտի: 1547 2—4

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԸՆԹԱՅՔ

ՕՍՄԱՆԵԱՆ ԼԵՁՈՒ

Մահ Ա.

ԱՌԱՋԱՆՈՐԴ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ

Գրք. — Վ. Նշան թորոսեանի

Այս գործն՝ որ ուրիշ այսպիսի դասա-
գրոց հետադառամա՞ր ո՛չ սակաւ առաւե-
լութիւններ ունի, խոր հետազոտութեանց
եւ երկար ժամանակեայ փորձառութեան
արդիւնք լինելով՝ կրնամք մեծաւ վստա-
հութեամբ յանձնարարել թուրքերէն լեզ-
ուի ուսուցչաց եւ ուսանողաց: Գրին է 3½
զրուշ, եւ կեդրոնատեղին՝ Կ. Պօլիս Կա-
մուրջին գլուխը Թ. 4, Օսմանեան գրա-
տունը: 1522 4—8

Ա. Զ. Դ

Ուսումնական Խորհրդէն վկայեալ
երիտասարդ մը հմուտ Անգլիերէն,
Գաղղիերէն, Հայերէն, Տաճկերէն լեզ-
ուաց եւ Գիտութեանց, պատրաստ է
դասախօսել թէ՛ տանց եւ թէ՛ այլ եւ այլ
դպրոցաց մէջ:

Դիմել Ալեքէի խմբագրատունը:

1524 2—4

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Ի ՄԱՐՍԻԼԻԱ

Ընդ հռչակաւորութեամբ Աւագր. Սեւեկի:

9 Սէնդ Վիքդուառ փողոց 9

Արհեստական ուսմանց տեսողութիւնն
երկու տարի է. Սակայն նախապատրաստա-
կան տարի մը, անհրաժեշտ այն օտարակա-
նաց համար որք ըստ բաւականին չեն գի-
տեր Ֆրանսերէնն, յատկացեալ է երիտա-
սարդաց որոց նախնական կրթութիւնը չափ
տարրական է. Նուազագոյն տարիքն է 14:

Ցերեկեայ աշակերտք 600 Փրանք, գիշեր-
թիկ 1900 Փր. Դիմել վարժարանին տնո-
րէնին: 1250 21—25

Վասն Սրտօնատեառն

Տնօրէն-Պատասխանատու

Ը. ՏԱՄԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐ. ԱՐԵՒԵԼԻ ԵՒ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐԱՅ



ՄԵՏԵՄ. Ս. Ա. ԱԼԼԷՆԻՆ

ԵՇ ԼՈՒՐՆԵՐՈՒՆՈՒ ՄԵՐ. ՆՈՐՈԳԻՈՂ

(MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER.)

Ճերմակ ընկած մազերուն գոյն, վերնիճ ու գեղ
կուտայ: Կը նորոգէ անոր կեանքը, ոյժը եւ աճումը:
Վիտու թերթ շուտ մը անկեղծ իշխնէ: Իր անուշ
հոտը առատ է ու հեշտալի:

“Մէկ շնչը կը բաւէ:” Եւ փորձը ունեցան
ամենքը որոնցմոխրագունած մազերը իրենց ընական գոյ-
նին դարձան, եւ ճաղատ տեղերը մազով ծածկուեցան:

Կերկ չէ, եւ ամենեւին զեան մը չընէր: Թէ որ կ'ուզես թարմ մազ ունենալ եւ բոլոր
կենացդ մէջ պահել, առանց ուշանալու շէշ մը ստացիր ԿԵՆԷՆՆԻ Ս. Ա. ԱԼԼԷՆԻ ՀԱՄԱՂ-
ՆԱՐԱԿԱՆ ԽԱՂԷ ԽՈՐԳՈՎԷՆ: (MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER.)

Վախաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Կոյնպէս
Բարիդ ու Կիւտ Եօրք: Կրկնաճառուի ամեն սափրիչներու, անոյշ իւղա-
գործներու եւ անգղիացի գեղագործներու քով:

Կը գտնուի Ն. եւ Ժ. Գանդիւք եղբայրք բրիտանական գեղարանը, Բերա, Մեծ
փողոց. Խամբնա Քարուան. Անգլիական միտերանոց, Նիւքսէք Գալտըրըմ. եւ Իզի-
տօր Լազանտէլլա 455, Բերա Մեծ փողոց:



ՀԵՐՄԵՆԵԿԱՆ ԾԱՂԿԱՓՈՒՆՑ

ԳԵՂԵՑԿԱՆՈՒՆՈՂ ՄԵՐՍՆՈՅ ԳՈՅՆԸ, ՄԻՇՏ

ԾԱՂԿԱՓՈՒԹ, ՄԻՇՏ ԹԱՐՍ:

Ընդամուտն մը փորձը պիտի համոզէ ամեն Տիկին թէ որչափ
գերազանց է այս ուրիշ ամեն հեղանիւթներէ եւ բազմաթիւ փոշի-
ներէ: Ընտելն անգամ գործածելովն ալ, որ քանի
մը վայրկեանի գործ է, պիտի տեսնուի իսկոյն որ
երեսը, վիզը, թեւերը եւ ձեռքները պիտի առ-
նուն անոյշ փափկութիւն մը եւ մարմարիոնի
փայլ, հանդերձ շուշանի եւ վարդի գունով եւ
բուրմամբ: Սպանի գրգռիչ յատկութիւնները
կը հանդարտեցունէ: Ընհետ կ'ընէ մորթի սեւութը, երեսի եւ ձեռքի ցաները, արեւայ-
րուքը, եւ ուրիշ ամեն բրտութիւն եւ բժաւորութիւն: Եւ այս ամեն բանով անկարելի
կ'ընէ մատնուիլ թէ արհեստով գեղեցկացուած է:

Վախաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Կոյնպէս
Բարիդ ու Կիւտ Եօրք: Կրկնաճառուի սափրիչներու, անոյշ իւղագործներու եւ
անգղիացի գեղագործներու քով:

Կը գտնուի Ն. եւ Ժ. Գանդիւք եղբայրք բրիտանական գեղարանը, Բերա, Մեծ
փողոց. Խամբնա Քարուան. Անգլիական միտերանոց, Նիւքսէք Գալտըրըմ. եւ Իզի-
տօր Լազանտէլլա 455, Բերա Մեծ փողոց:



ԿԵՆԷՆԻ, ԱՃՈՒՄՆ Ե ԳԵՂ ՄԱՋԵՐՈՒ:

ՄԵԼԻՐՈՋ

ՄԵՐՍԵՐՈՒ ՄԵԿ ՀԵՏԻԿ ՆՈՐՈԳԻՈՂ

Խրապէս իրենց առջի թարմ գոյնին կը դարձունէ ճերմկած կամ գունաթափ
մազերը. Կը դադրեցունէ անոնց թափելը. Կը մաքրէ գլուխը, կը վերջացունէ
թեփը, ու մազերուն նոր կեանք, աճումն, փայլ ու գեղեցկութիւն կուտայ:

Կը վաճառուի երկու չափով՝ մեծ շնչերու մէջ:

Վախաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southa Apton Row). Կոյնպէս
Բարիդ ու Կիւտ Եօրք:

Կը գտնուի Ն. եւ Ժ. Գանդիւք եղբայրք բրիտանական գեղարանը, Բերա, Մեծ
փողոց. Խամբնա Քարուան, Անգլիական միտերանոց, Նիւքսէք Գալտըրըմ. եւ Ի-
զիտօր Լազանտէլլա 455, Բերա Մեծ փողոց:

